*устойчивую макроэкономическую среду, которая обеспечит как краткосрочный, так и средне- и долгосрочный устойчивый экономический рост.*

LUSINE KHACHIKYAN

## MONETARY AND CREDIT POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF EURASIAN ECONOMIC INTEGRATION

*Key words:* *inflation, fiscal and monetary policy, CB toolkit, dollarization, money-laundering, strong currency policy.*

*The process of regulation of inflation and the national currency has a significant impact on GDP growth, export growth and state budget execution. Only the agreed fiscal and monetary policy contributes to the improvement of Armenia's economic development scenario, combined monetary and fiscal policies should create a dynamic and sustainable macroeconomic environment that will enable both short- and medium- and long-term sustainable economic growth*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
*Նախագծերի կառավարում համատեղ ծրագիր, մագիստրատուրա, 1-ին կուրս*

## ՀՀ-ՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

**Հիմնաբառեր**. *ներգնա զբոսաշրջություն, ներքին զբոսաշրջություն, զբոսաշրջիկ, զբոսաշրջության ոչ ավանդական ձևեր, էկոզբոսաշրջություն, գնային քաղաքականություն*

*Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության առաջատար ոլորտներից մեկն է: Հոդվածում ուսումնասիրվել է ՀՀ զբոսաշրջության ոլորտի առկա վիճակը, բացահայտվել են խնդիրները, առաջարկվել են այն ավելի գրավիչ դարձնելու լուծումներ:*

Աշխարհի զարգացած, առավել ևս զարգացող պետությունների համար տնտեսության հզորացման կարևոր գործիքներից մեկը զբոսաշրջությունն է:

Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալների՝ 2017 թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ է ժամանել 1494779 զբոսաշրջիկ, ինչը շուրջ 235 հազարով ավելի է 2016 թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Ներգնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է ծառայել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված ՀՀ ժամանողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով:

2004–2017 թթ. ներգնա զբոսաշրջիկների քանակը ՀՀ-ում հիմնականում գրանցել է կայուն աճ: 2013 թ. ՀՀ պատմության մեջ առաջին անգամ ներգնա զբոսաշրջիկների քանակը հատել է մեկ միլիոնի շեմը՝ կազմելով 1084188: Թեև 2015 թ. Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված միջոցառումնե-

ին բազմաթիվ զբոսաշրջիկներ են ՀՀ այցելել, սակայն, 2014 թ. համեմատ, ՀՀ ժամանած ներգնա զբոսաշրջիկների քանակը նվազել է 0.97%-ով: Նվազումը պայմանավորված է հիմնականում ՌԴ-ից այցելությունների նվազմամբ, որի պատճառը ռուբլու արժեզրկումն էր: Հետագայում ներգնա զբոսաշրջիկների քանակը կրկին աճ է գրանցել՝ 2016-ին և 2017-ին աճելով համապատասխանաբար 5.7 և 18.7%-ով: Ընդհանուր առմամբ, 2004–2017 թթ. ՀՀ այցելած զբոսաշրջիկների քանակը ավելացել է շուրջ 6 անգամ:




**Աղբյուրը՝** *ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն*

**Գծապատկեր** 1. ***ՀՀ կատարած ներգնա զբոսաշրջային այցելությունների աճի շարժընթացը*** *2004-2017 թթ.*

Զբոսաշրջիկների ամենամեծ հոսքը դեպի ՀՀ ՌԴ-ից, Իրանից և ԱՄՆ-ից է: Քիչ չեն զբոսաշրջիկները նաև Գերմանիայից, Ֆրանսիայից և Իտալիայից: Առաջին տասնյակում են նաև Վրաստանը, Մեծ Բրիտանիան, Ուկրաինան և Կանադան: 2017 թ. զբոսաշրջիկների 20.3%-ը ժամանել է ՌԴ-ից, 14.2%-ը՝ Իրանից, իսկ 13.6%-ը՝ ԱՄՆ-ից:




**Աղբյուրը՝** *ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն*

**Գծապատկեր** 2. ***Ներգնա զբոսաշրջության ցուցանիշները*** *2017 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, ըստ այցելության նպատակի*

2017 թ. զբոսաշրջիկների 53%-ը ՀՀ է այցելել հանգստի և ժամանցի, 24%-ը՝ գործնական, իսկ 23%-ը՝ այլ նպատակով (բուժման, կրթության և այլն):

Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2017 թ. ներքին զբոսաշրջիկների քանակը կազմել է 1 087 հազար մարդ, որը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 10.9%-ով կամ 107 հազարով:

2010–2017 թթ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կայուն կերպով աճել է: Աճը հատկապես արագացել է 2013 թ., որը կապված է պետության կողմից սոցիալական փաթեթների ներդրմամբ: 2013 թ. ներքին զբոսաշրջիկների քանակը կազմել է 670 հազար, որից 60 հազարը օգտվել է սոցիալական փաթեթներից: Աճը դանդաղել է 2015 թ., որը կապված է ռուսական ռուբլու արժեզրկման և ՌԴ-ից տրանսֆերտների նվազման հետ, սակայն 2016–2017 թթ. կրկին աճել է:




**Աղբյուրը՝** *ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն*

***Գծապատկեր 3. ՀՀ ներքին զբոսաշրջիկների աճի շարժընթացը** 2010–2017 թթ.*

Ներքին զբոսաշրջիկները ճանապարհորդում են հետևյալ նպատակներով՝ հանգիստ և ժամանց՝ 68.3%, գործնական՝ 23.3%, բուժման՝ 4%, իսկ մնացած 4%-ը՝ այլ նպատակներով[1]:

Զբոսաշրջության զարգացումը հզոր խթան է մեր երկրի տնտեսության բազմատեսակացման և զարգացման առումով: Ներգնա զբոսաշրջությունը արտահանման բաժնում հանքահումքային արտադրանքի և մետաղների արտահանումից հետո երկրորդն է[2]: Ըստ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ մեկ զբոսաշրջիկը ՀՀ-ում անց է կացնում միջինը 17 օր՝ ծախսելով շուրջ 770 դոլար (370 հազար դրամ)[3]: Այսինքն, մեկ զբոսաշրջիկը ՀՀ-ում օրական ծախսում է միջինը 21500 դրամ:

Չնայած զբոսաշրջային այցելությունների աճող տեմպին՝ ՀՀ-ում ոլորտի զարգացման ճանապարհին առկա են մի շարք մարտահրավերներ ու

[1] http://armstat.am/file/article/sv_01_18a_422.pdf
[2] http://ampop.am/tourism-in-armenia/#imageclose-2584
[3] https://www.e-unwto.org/doi/abs/10.5555/unwtotfb0051010020112015201612%D5%BE

խոչընդոտներ, որոնք անհրաժեշտ է հաղթահարել՝ զարգացման ներուժը առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու համար: Դրանք են՝

1. **Հայկական զբոսաշրջային արդյունքի զբաղեցրած տեղը միջազգային զբոսաշրջային շուկայում** – Չնայած հարուստ պատմամշակութային և բնական զբոսաշրջային ռեսուրսների առկայությանը՝ ՀՀ-ն ներկայումս չի գտնվում համաշխարհային զբոսաշրջային ուղղությունների շարքում: ՀՀ ներգնա տուրօպերատորների միության տնօրեն Կարինե Դավոյանի տեղեկացմամբ՝ ՀՀ-ում պետբյուջեից հատկացվող միջոցները տատանվում են 400 հազար դոլարի շրջանակում: Համեմատության համար նշենք, որ հարևան Վրաստանում տարեկան պետական բյուջեից ոլորտի զարգացման համար հատկացվում է 9-10 մլն դոլար, նույնքան էլ ներդնում է մասնավոր հատվածը[1]: Ոլորտի զարգացումը խթանելու համար Հայաստանի և Վրաստանի ներգնա տուրօպերատորները զբոսաշրջիկներին առաջարկում են համատեղ տուրփաթեթներ, ինչը առավել գրավիչ է դարձնում տարածաշրջանը: Անհրաժեշտ է Հայաստան-Վրաստան-Իրան համատեղ փաթեթներ ստեղծել՝ տարածաշրջանն էլ ավելի գրավիչ դարձնելու համար:

2. **Ոչ մատչելիությունը** – Տարածաշրջանի այլ ուղղությունների համեմատությամբ օդային ուղևորափոխադրման ծախսերը բավականին բարձր են, ճանապարհային ցանցը սահմանափակ է, թռիչքի ժամանակացույցները (մասնավորապես՝ դեպի Արևելյան Եվրոպա) անհարմար են, օդային փոխադրման վճարներն ակնհայտորեն շատ բարձր են: Վիճակագրական տվյալների համաձայն՝[2] 2010-2017 թթ. 260 հազար ՀՀ քաղաքացի օգտվել է Վրաստանի օդանավակայանից: Նշանակալից հոսք սկսվել է 2013 թ., երբ դադարեցվել է Արմավիայի գործունեությունը և իր գագաթնակետին հասել 2015 թ.՝ կազմելով 68533 ուղևոր: Թեև այդ ցուցանիշը ՀՀ օդային փոխադրումների 3.6%-ն է կազմում, այնուհանդերձ, փաստը պետք չէ անտեսել: 2016 թ. այդ ցուցանիշը կրճատվել է 46%-ով, սակայն 2017 թ. կրկին աճ է գրանցել: Դա կարող է պայմանավորված լինել ինչպես ավիատոմսերի գնային մատչելիությամբ, այնպես էլ՝ Թբիլիսիից տարբեր ուղղություններով չվերթերի քանակով: Բարձր գներ կարող են ձևավորվել մի քանի պատճառով՝ օդանավակայանի սպասարկման բարձր սակագներ, վառելիքի բարձր արժեք, բարձր հարկեր, մրցակցության բացակայություն և այլն: Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում մեկ ուղևորի սպասարկման միջին արժեքը կազմում է 45 դոլար, իսկ Թբիլիսիի «Շոթա Ռուսթավելի» օդանավակայանում՝ 51 դոլար[3]: Երևանում օդանավակայանի սպասարկման արժեքն ավելի ցածր է, քան Վրաստանում, սակայն Երևանում ավիատոմսի գնի վրա ավելանում է նաև շուրջ 20 դոլարի չափով (10000 դրամ)[4] պետական տուրք («օդի փող»): Եվ ահա, այսպես կոչված «օդի փողի» հետևանքով մեկ ուղևորի սպասարկման արժեքը միջինում դառնում է շուրջ 65 դոլար: Սա, մեր կարծիքով, այն հիմնական պատճառն է, որն ավելացնում է ավիատոմսի գինը և հայաստանյան չվերթերը Վրաստանի համեմատ դարձնում մրցակցապես թույլ: Օրինակ, Երևան-Դուբայ թռիչքի միջին արժեքը 2018 թ. ձմռանը կազմել է 255 դոլար,

---

[1] http://www.a1plus.am/1517159.html

[2] Տե՛ս «Մոդեքս» խորհրդատվական ընկերություն:

[3] regnum.ru

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը պետական տուրքի մասին: Հոդված 20, կետ 30:

Թբիլիսի-Դուբայ թռիչքը՝ 200 դոլար, Երևան-Աթենք թռիչքը՝ 248 դոլար, Թբիլիսի-Աթենք թռիչքը՝ 175 դոլար, Երևան-Հռոմ թռիչքը՝ 263 դոլար, իսկ Թբիլիսի-Հռոմ թռիչքը՝ 202 դոլար[1]: Թեև միշտ էլ կլինեն ՀՀ քաղաքացիներ, որոնք նույնիսկ այլ հավասար պայմաններում կնախընտրեն Թբիլիսիի օդանավակայանը, քանի որ պարզապես իրենց ավելի մոտ է: Օրինակ, Ալավերդիից Թբիլիսիի օդանավակայան հեռավորությունը 126 կմ է, Նոյեմբերյանից՝ 106 կմ, Ալավերդիից «Զվարթնոց» օդանավակայան՝ 191 կմ, Նոյեմբերյանից՝ 197 կմ:

3. **Ենթակառուցվածքներ** – ՀՀ-ում զբոսաշրջային ենթակառուցվածքների ներկա վիճակը հնարավորություն չի ընձեռում սպասարկելու մեծաթիվ և բարձր վճարողունակությամբ զբոսաշրջիկների: ՀՀ-ում զբոսաշրջության կայուն զարգացման և հայկական զբոսաշրջային արդյունքի որակի շարունակական ապահովման համար անհրաժեշտ է ձևավորել և զարգացնել ոլորտը սպասարկող ենթակառուցվածքները (միջպետական նշանակության ավտոմայրուղիներ, դեպի զբոսաշրջային գրավչության օբյեկտներ տանող ավտոճանապարհներ, մատչելի հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, բարձրակարգ հյուրանոցներ, զբոսաշրջային տների ցանցի ձևավորում և զարգացում, զբոսաշրջային տների ցանցի ինտեգրում համաշխարհային համապատասխան ցանցերին, զբոսաշրջային կլաստերների ձևավորում և զարգացում): 2017 թ. սկզբին ՀՀ-ում գործել է 551 հյուրանոց կամ հյուրանոցատիպ օբյեկտ՝ մոտավորապես 25 հազար ննջատեղով[2], սակայն հյուրանոցային համարներից միայն 20%-ն է լուքս կամ կիսալուքս, մյուսները սովորական համարներ են[3]:

4. **Սեզոնայնություն** – ՀՀ-ում զբոսաշրջությունը բնութագրվում է խիստ արտահայտված սեզոնայնությամբ: Ներգնա զբոսաշրջիկների գերիշխող մեծամասնությունը, մասնավորապես՝ հանգստի նպատակով այցելողները, ՀՀ են ժամանում մայիսից հոկտեմբեր ժամանակահատվածում, որը սակավ օդային փոխադրումների և հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեության աշխատանքում ստեղծում է ծանրաբեռնվածություն: Տարվա մնացած հատվածում զբոսաշրջության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններում եկամուտը ցածր է, հյուրանոցների զբաղվածությունը նվազում է, և աշխատատեղերից շատերը կրում են սեզոնային բնույթ: 2017 թ. ապրիլից սեպտեմբեր ժամանակահատվածում ՀՀ այցելել է 873869 զբոսաշրջիկ, իսկ մնացած ժամանակահատվածում՝ 620910՝ շուրջ 41%-ով պակաս[4]: Այս առումով պետք է ձևավորվեն և համաշխարհային շուկա արտահանվեն այնպիսի այլընտրանքային զբոսաշրջային արդյունքներ և ծառայություններ, որոնք թույլ կտան նվազեցնել սեզոնայնությունը:

Առաջարկում ենք զբոսաշրջության ոլորտի խնդիրների ր հետևյալ լուծումները՝

1. **Էկոզբոսաշրջության զարգացում ՀՀ-ում**: Լեռնային և մասնատված ռելիեֆի պայմաններում ՀՀ-ի համար հեռանկարային և չափազանց եկամտաբեր կլինի հատկապես էկոզբոսաշրջության զարգացումը.

[1] https://www.expedia.com
[2] http://www.mineconomy.am, armstat.am
[3] http://hetq.am/arm/news/75292/hayastani-hyuranocayin-olorty-inch-unenq-aysor.html
[4] http://armstat.am/file/article/sv_03_17a_421.pdf

Հայաստանը հանրահայտ է եզակի ռեկրեացիոն ռեսուրսներով, սակայն անտառային, ջրային ռեսուրսները տարածական առումով սուղ են: Դժվարանցանելի ռելիեֆի պայմաններում մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել բարձրաբերձ հրաբխային լճերը, բնական հուշարձանները, լեռնային կիրճերը, եկեղեցական և ճարտարապետական կոթողները, որոնք մատչելի են ոչ թե ավտոմեքենաներով, այլ ձիերով, ջորիներով, հետիոտն զբոսաշրջության համար: Ի դեպ, զբոսաշրջությունը չի պահանջում ծավալուն ներդրումներ և միաժամանակ ունի էկոլոգիական մեծ նշանակություն:

2. **Որսորդության՝ որպես զբոսաշրջության ոչ ավանդական ձևի զարգացում**: Հայաստանում կան որսորդության պայմաններ, ինչը կարելի է զարգացնել՝ ներգրավելով ոլորտի սիրահարներին:
3. **Գնային քաղաքականության նկատմամբ վերահսկողության ուժեղացում**: Պետք է մեծ ուշադրություն դարձնել գնային քաղաքականությանը, այդ թվում՝ օդանավակայանի կողմից մատուցվող ծառայությունների բարձր արժեքին՝ հաշվի առնելով տարածաշրջանում մրցակցության ուժգնությունը:
4. **Մասնավոր ներդրումների խթանում**: Մասնավոր ներդրումների խթանումը և նորամուծական տեխնոլոգիաների ներդրումը կբարձրացնեն ոլորտի մարքեթինգային միջոցառումների արդյունավետությունը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է զարկ տալ զբոսաշրջության ոչ ավանդական ձևերին:

**ОГАНЕС КАРАПЕТЯН**

## СОСТОЯНИЕ НЫНЕШНЕГО ТУРИЗМА, ПРОБЛЕМЫ ОТРАСЛИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ В РА

**Ключевые слова:** *въездной туризм, внутренний туризм, турист, нетрадиционные формы туризма, экотуризм, ценовая политика.*

*Туризм является одним из ведущих отраслей нынешней всемирной экономики. В статье исследовано нынешное состояние туризма в Армении, выявлены проблемы данной отрасли и сделаны рекомендации по искоренению проблем и для того чтобы отрасль стала более привлекательной.*

HOVHANNES KARAPETYAN

## CURRENT SITUATION OF THE TOURISM IN THE RA, EXISTING PROBLEMS OF THE FIELD AND DEVELOPMENT PERSPECTIVES

Key words: *inbound tourism, domestic tourism, tourist, non-traditional tourism, ecotourism, pricing policy.*

*Tourism is one of the leading fields of the world economy. The article explores current status of RA tourism, identifies current problems, some suggestions of problem solving and making the field more attractive have been done.*